ԹԵՄԱ 5

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԴԱՍ 5.2 Աշխարհի քաղաքական բաժանումը (նորագույն ժամանակներ)

1. *Աշխարհի տարածքային վերաբաժանման հարցում առավել շահագրգռված էին Գերմանիան (այդ ժամանակ մի պատկերավոր արտահայտություն էին օգտագործում. Գերմանիան ուշացել է ուտեստների սեղանից) և Ավստրո-Հունգարիան:* Նրանք էլ սանձազերծեցին Առաջին աշխարհամարտը, որն ուղղված էր Անտանտ խմբավորման (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) դեմ: Առաջին աշխարհամարտում զոհվեց 10 մլն մարդ:

Առաջին համաշխարհային պատերազմը, ըստ էության, մղվում էր աշխարհի քաղաքական քարտեզի վերաձևման համար:

Պատերազմն ավարտվեց գերմանա-ավստրիական բլոկի պարտությամբ: Գերմանիան կորցրեց իր տարածքի մի մասը և բոլոր գաղութները Աֆրիկայում ու Օվկիանիայում:

2. Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանները (Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմաններում) որոշելու էր ԱՄՆ-ի նախագահը՝ որպես միջնորդ: Հայաստանը ելք էր ստանում Սև ծով:

ԱՄՆ-ի նախագահը 1920 թ. նոյեմբերին ստորագրեց այդ սահմանները որոշող փաստաթուղթը (հայտնի է որպես Վ. Վիլսոնի իրավարար վճիռ), որը սահմանում էր Հայաստանի Հանրապետության 161 հզ. քկմ պետական տարածքը, որից 90 հզ. քկմ Արևմտյան Հայաստանից: Սևրի պայմանագիրը չճանաչեց Խորհրդային Ռուսաստանը: Սուլթանական կառավարությունը չընդունեց Սևրի պայմանագիրը, իսկ սուլթանը չհամարձակվեց վավերացնել այն: Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի տնտեսական ու ռազմական օգնությամբ կարողացավ Անտանտի երկրների դեմ տանել մի շարք հաղթանակներ, և Սևրի պայմանագիրը 1923 թ. Լոզանի պայմանագրով չեղյալ հայտարարվեց: Ավելին, նրանց հաջողվեց Հայաստանի հաշվին ձեռք բերել նոր տարածքներ և իր սահմանները շարժել դեպի արևելք:

3. Այս փուլի կարևորագույն պատմական իրադարձությունը ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական շարժումն էր, համաշխարհային գաղութային համակարգի փլուզումը և 1945-1990 թթ. ընթացքում Ասիայում,

Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում և Օվկիանիայում 100-ից ավելի անկախ պետությունների ստեղծումը: Իրենց գաղութներից զգալիորեն զրկվեցին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Բելգիան, Նիդեռլանդները, Պորտուգալիան: Երկրորդ աշխարհամարտի ավարտին ստեղծվեց միջազգային նոր կառույց՝ ՄԱԿ-ը, որը փոխարինելու եկավ Ազգերի լիգային: Նրա հիմնական առաքելությունը խաղաղության, երկրների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը և մարդու իրավունքների պահպանումն էր:

ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ
ՄԱՍՇՏԱԲ 1: 18 000 000
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
ՂԱԶԱԽՍՏԱՆ
ՈՒԶԲԵԿԻՍՏԱՆ
ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ
ՍԱՎԱՆԻ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ԹՈՒՐՔԻԱ
ՍԻՐԻԱ
ԻՐԱՆ
ԻՐԱՔ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ
ԵԳԻՊՏՈՍ
ՍՈՒԴԱՆ
ԷԹԻՈՊԻԱ
ԵՄԵՆ
ՕՄԱՆԻ ԾՈՎ
ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎ
ՀՆԴԿԱԿԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ
ՍՈՄԱԼԻ
ՔԵՆԻԱ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՈՒԴԱՆ
ԿԱՀԻՐԵ
Դոնի Ռոստով
Սև ծով
Ստամբուլ
Բուրսա
Անկարա
Իզմիր
Կոնիա
Ադանա
Մերսին
Հալեպ
Դամասկոս
Բեյրութ
Համան
Բաղդադ
Թեհրան
Թավրիզ
Մուսուլ
Երևան
Թբիլիսի
Բաքու
Աշգաբատ
Դոնդան
Քերեք
Սարդեվար
Մաշհադ
Բախթարան
Սպահան
Ուրմիա
Սանա
Ալեքսանդրիա
Կահիրե
Սուեզ
Սինա
Ասուան
Խարթում
Ասմերա
Ադիս-Աբեբա
Ջիբուտի
Մոգադիշո
Նայրոբի
Մոմբասա
Դար-էս-Սալամ
Ադեն
Սանա
Մասկատ
Դուբայ
Աբու-Դաբի
Դոհա
Մանամա
Էր Ռիադ
Մեքքա
Մեդինա
Ջիդդա
Բաղդադ
Բասրա
Թեհրան
Դամասկոս
Երուսաղեմ
Բեյրութ
Անկարա
Թբիլիսի
Երևան

4. Հարավսլավիայի տեղում առաջացան Սերբիան, Հորվաթիան, Բոսնիան և Հերցեգովինան, Սլովենիան, Չեռնոգորիան (Մոնտենեգրո), Կոսովոն, Մակեդոնիան (այժմ՝ Հյուսիսային Մակեդոնիա), նախկին սոցիալիստական երկրները, բացառությամբ ԿԺԴՀ-ի, Կուբայի, մասամբ և Չինաստանի, անցել են ազատ շուկայական հարաբերությունների:

1990 թ. միավորվեցին Գերմանիաները՝ ստեղծելով Գերմանիայի Դաշնային Հանրապետություն: 1993 թ. Չեխոսլովակիան բաժանվեց Չեխիայի և Սլովակիայի:

Սխալ է կարծել, թե կառավարման հանրապետական կարգը մշտապես ժողովրդավարական է և առավելություն ունի միապետականի նկատմամբ: Բավական է եվրոպական միապետությունները համեմատել Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի մի շարք հանրապետությունների հետ, որ հրաժարվենք նման թեզի բացարձակացումից: